ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հեռ.՝ 522.364, 525.392, Ֆաքս՝ 522.364, Էլ. փոստ՝ press@president.am, Հասցե՝ Բաղրամյան 26, 0077

Հ-603

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ

Նախագահ Լիանա Դոյդոյանին

Հարգելի Լիանա Դոյդոյան,

Ի պատասխան ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարին ուղղված Ձեր 16.03.2016թ. հարցմանը, տեղեկացնում ենք, որ ՀՀ Նախագահի աշխատակազմին սպասարկող ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակներում, ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգի համաձայն, ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով առանձին անձանց տրանսպորտային սպասարկման նպատակով աշխատակազմին հատկացված ավտոմեքենաները:

ՀՀ Նախագահի աշխատակազմի ծառայողական ավտոմեքենաների քանակը 21.03.2016թ. դրությամբ կազմում է 62: Նախագահի աշխատակազմին սպասարկող տարբեր մակնիշի ծառայողական ավտոմեքենաների համար տրամադրված պետհամարանիշները 002 ՍՍ 01-ից մինչև 099 ՍՍ 01 են:

Կից ներկայացվում է ՀՀ Նախագահի աշխատակազմին սպասարկող ծառայողական ավտոմեքենաների ցանկը՝ մակնիշներով:

Առդիր 2 էջ:

Հարգանքով՝

Վարչության պետ՝ Մերի Հարությունյան

22.03.2016թ.